

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուսավիտու ժողովարարն ու մանր :
(Տես երես 52)

Թագաւորը քիչ մը ատեն խուցին մէջ վեր վար պտըտելէն ետքը ինծի մօտեցաւ , ու ըսաւ որ իրեն ճաշը բերեմ . իսկ ես ձեռք ձեռքի վրայ դրած յուսահատաբար կեցեր էի : Բիչ մը վերջը երկու պահապան զիս կանչեցին կերակրոյ խուցը , և հոն ինծի հրովարտակ մը կարդացին , որուն մէջ ասանկ զրուած էր . “ Լուսավիտու կերակրոյ ատեն ոչ դանակ և ոչ ալ պատառաքող պիտի գործածէ . և իր սենեկապետին դանակ մը միայն տրուի , որպէս զի հացն ու միսը կտրէ , բայց ան ալ երկու պահապանի ներկայութեամբ . ու կերակուրը լմննալէն վերջը նորէն առնուի դանակը , ” : Պահապանները ինծի ըսին որ աս բանս թագաւորին ալ իմացնեմ , բայց ես չուզեցի :

Թագաւորը կերակրոյ խուցը մտնելով տեսաւ որ հոն թագուհւոյն կերակուրն ալ պատրաստ կեցեր էր . հարցուց թէ ինչո՞ւ ժամ մը ուշացուցեր էին անոնց կերակուրը , և վրայ բերաւ թէ արդեօք խեղճերը որչափ անհանգիստ եղած պիտի ըլլան ասանկ ուշանալուն վրայ : Երբոր սեղանն նստեցաւ , “ Պահակ չունիմ , ” ըսաւ . ան ատեն Սիւնիէ ըսուած պահապանը իմացուց իրեն հասարակաց ատենին հրովարտակը : Երբոր թագաւորը պատճառն իմացաւ , “ Լոյսչափ զիս վատ կը կարծեն , ըսաւ , որ ինքզինքս սպաննեմ . զիս յանցաւոր կը սեպեն այն բաներուն մէջ որ անմեղ եմ , անոր համար չեմ վախեր մեռնելէն . կը փափաքէի որ իմ մահուամբս Պաղղիացիք երջանիկ ըլլան , ու ազատին այն թշուառութիւններէն , զորոնք աչքիս առջեւ կը տեսնեմ , ” : Եւ ըսելով բոլորովին լռեց . քիչ կերաւ . միսը զգալով կտրեց , իսկ հացն ալ ձեռքովը . և բոլոր կերակրոյ միջոցը քանի մը վայրկեան տուեց :

Երբոր ես իրիկուան 6^{ին} ատենները ցաւոյ մէջ ընկղմած խուցս կեցեր էի , Լարա նորէն աշտարակը եկաւ . Սանդէռ , որ միշտ առջեւէն կու գար , դէպի թագաւորին մօտենալով՝ զուարթութեամբ մը ըսաւ . “ Լհաւասիկ Պործաղիր ժողովքը , ” : Եւ ատեն Լարան առաջ անցնելով ըսաւ թագաւորին՝ որ իր նամակը ժողովքին տարեր էր , և թէ ահա այս էր պատասխանը . “ Թոյլ տրուած է Լուսավիտոսին ընտրել քահանայ մը ինչ կրօնքէ որ ինքը աւելի ախորժի և ուզէ նէ . առանց վկայից ու ազատութեամբ կարենայ տեսնել իր ընտանիքը , և թէ Լգգը որ միշտ Մեծ է և Արդար իր ընտանեաց վիճակին վրայօք ալ կը մտածէ . և որոնք որ թագաւորական ընտանիքէն առնելիք մը ունին նէ , անոնց ալ տէրութիւնը բան մը կը վճարէ . իսկ մահուան վճարն գործադրութիւնը իրեք օր ուշացնելու համար ժողովքը դեռ բան մը չէ որոշած , ” :

Թագաւորը աս բաներս մտիկ ընելէն վերջը , առանց բան մը ըսելու՝ նորէն իր խուցը մտաւ , ինծի ըսելով . “ Սանդէռին կերպը տեսնելով՝ կարծեցի որ իրեք օր ուշացնելու խնդիրքս կատարեր են , ” : Եւ ատեն երիտասարդ պահապան մը , որուն անունն էր Պողոսն , տեսնելով թագաւորին ինծի հետ խօսիլը՝ քովերնիս մօտիկցաւ . “ Լարծեմ , ըսաւ թագաւորը թերեւս հեգնելով մը , որ իմ թշուառութիւններու վրայ կը ցաւիս . անոր համար ընդունէ իմ անկեղծ շնորհակալութիւններս , ” : Ողորմելին պապանձած մնաց , և չկրցաւ պատասխան մը տալ . իսկ ես զարմացայ թագաւորին աս ըսածին վրայօք , վասն զի այս երիտասարդս որ հազիւ 22 տարուան կար , և զրսուանց քաղցր ու ազնիւ կերպ մը կը ցուցնէր , քիչ առաջ թագաւորին վրայօք խօսելով ըսեր էր . “ Չանացի որ հաճար գամ իր վաղուան ընելու կանացի թեթեւութիւնները տեսնելու համար , ” : անդիէն՝ Սերսըրոյ որմնագիրն ալ , որուն վրայօք ուրիշ տեղ խօսեր եմ ,

վրայ բերաւ ըսելով. “ Այ՛ դք կ'ուզէր հոս գտնուիլ այսօր . իսկ ես , ինչ որ ալ տան ինծի , չեմ փոխեր այսպիսի օր մը ” : Բ՛հա այսպիսի անզգամ ու չար մարդիկներ պահապան կը գնէր հասարակութիւնը թագաւորին քով իր վերջին վայրկեաններուն :

Զորս օր էր որ թագաւորը չէր տեսնուած իր փաստաբաններուն հետ . քովէն հեռացուցեր էին ան տեսակ պահապանները , որ կարեկից կ'ըլլային իրեն վշտացը . իր այնչափ հպատակներէն , որոնց հայր եղած էր , ու այն ամէն գաղղիացիներէն , որոնց ամէն տեսակ բարերարութիւն ըրեր էր , միայն մէկ ծառայ մը մնացած էր որ իր ցաւոցը մասնակից կ'ըլլար : Դաշնակից ժողովքին պատասխանը կարդացուելէն վերջը , պահապանաց գլխաւորները առանձին կանչեցին արդարութեան պաշտօնեայն , և հարցուցին թէ թագաւորը ինչպէս կրնար տեսնել իր ընտանիքը : “ Բռանձին , ըսաւ Կարա , վասն զի Եղովքին կամքը աս է ” : այն ատեն պահապանաց գլխաւորները իմացուցին իրեն հասարակաց ատենին հրովարտակը , որ կ'ապսպրէր իրենց գիշեր ու ցորեկ թագաւորին վրայ աչք ունենալ : Բայց այս երկու իրարու հակառակ հրովարտակները յարմարեցնելու համար՝ որոշեցին պահապանաց գլխաւորները արդարութեան պաշտօնէին հետ , որ թագաւորը սեղանատան մէջ տեսնուի իր ընտանեաց հետ , որպէս զի առկա կափեղկէն տեսնեն զըսիւնները ներսի ելողները . և թէ դռները գոցուին , խօսածնին չլսելու համար :

Թագաւորը կանչեց արդարութեան պաշտօնեայն , և հարցուց թէ արդեօք իմացուցեր էին Պ . Ֆիրմընդին . Կարա պատասխան տուաւ՝ թէ իր հետը կառքով եկեր էր , և խորհրդարանին մէջ կը սպասէր , և թէ քիչ ատենէն հետը կը տեսնուի : Թագաւորը պահապաններէն մէկը կանչեց , որ պաշտօնէին հետ կեցած կը խօսէր , ու 3,000 ֆրանգի գումար մը յանձնեց որ Պ . Մալերպին տայ , վասն զի իրենն է , ը-

սաւ . պահապանը թէպէտ խօսք տրւաւ , բայց շիտակ զայն խորհրդարանը տարաւ . և ստակը Պ . Մալերպին ձեռքը չհասաւ :

Երբոր եկաւ Պ . Ֆիրմընդ , թագաւորը զինքը պզտի աշտարակը տարաւ , և հոն երկուքը առանձնացան . Կարա երբ գնաց , իրեք պահապան միայն մնացին թագաւորին բնակարանը :

Թիւն ատենները թագաւորը դուրս ելաւ իր ներքին սենեկէն , և պահապաններուն ըսաւ որ զինքը իր ընտանեացը քով տանին . անոնք պատասխան տուին՝ թէ աս բանս իրենք չէին կրնար ընել , և “ Թէ որ կ'ուզես նէ , ըսին , ընտանիքդ վար բերենք ” : — “ Ի՞նչ այնպէս ըլլայ , պատասխանեց թագաւորը , բայց հարկաւ խուցիս մէջ առանձին պիտի ըլլամ իրենց հետ ” : — “ Զէ , ըսաւ անոնցմէ մէկը , արդարութեան պաշտօնէին հետ անանկ որոշեցինք , որ սեղանատան մէջ տեսնուիք ” : — “ Սակայն գիտէք անշուշտ , ըսաւ թագաւորը , որ Դաշնակից ժողովքը հրաման տուած է ինծի առանձին տեսնուիլ հետերնին ” : — “ Երբ տարակոյս չկայ , պատասխան տուին պահապանները , որ խուցին մէջ մինակ պիտի ըլլաք , դուռն ալ գոց՝ որ խօսածնիդ չլսենք , և միայն ապակափեղկէն պիտի դիտենք զձեզ ” : — “ Ինչ որ կ'ուզէք նէ ըրէք , ըսաւ թագաւորը , միայն թէ ընտանիքս վար բերէք ” :

Ինչ ատեն թագաւորը սրահը մտաւ , ես ալ հետը ետեւէն գացի . սեղանատախտակը քովընտի քաշեցի , որպէս զի տեղ բացուի , ու հոն աթոռներ շարեցի : “ Եւ կ'ըլլայ , ըսաւ թագաւորը , որ գաւաթ մը ու քիչ մը ջուր բերես ” : Հոն արդէն սեղանատախտակին վրայ շիշ մը կար , որուն ջուրը սառած էր , և ես գացի միայն գաւաթ մը բերի : “ Գնա նոր ջուր բեր որ սառած չըլլայ , կրկնեց թագաւորը , վասն զի թէ որ թագուհին ասկից խմէ , կրնայ վնասուիլ . ըսէ նաև Պ . Ֆիրմընդին որ խուցէն դուրս չելլէ , որովհետեւ ընտանիքս կրնայ զինքը տեսնելով խուովիլ ” :

Լ՝յն պահապանն որ զիրենք բերելու գացեր էր, քառորդ մը ուշացաւ . աս միջոցին թագաւորը իր ներքին սենեակը մտաւ և անսովոր այլայլութեամբ մը երբեմն երբեմն դէպ 'ի իրենց գալու դուռը կ'երթար :

Թուկէսին դուռը բացուեցաւ . ամենէն առաջ թագուհին իր որդւոյն ձեռքէն բռնած ներս մտաւ , ետեւէն արքունական օրիորդը , և հուսկ յետոյ Եղիսաբեթ խաթունը . ամէնքն ալ թագաւորին գիրկն ինկան , ու անանկ քանի մը վայրկեան լուռ կեցան , բայց քիչ ատենէն իշխանուհիները իրենց հեծկլտանքովը լուռութիւնը լուծեցին : Թագուհին անանկ կերպ մը ցուցուց , իբրեւ թէ կ'ուզէր թագաւորին հետ ներքին սենեակը առանձնանալ . —

« Ընէ , ըսաւ թագաւորը , ուրիշ տեղ չեմ կրնար ձեզի հետ տեսնուիլ , բաց 'ի աս սրահէն » . աս միջոցին ներս մտան , և ես անոր ապակափեղկ դուռը գոցեցի : Թագաւորը նստեցաւ . թագուհին աջ կողմը ու Եղիսաբեթ խաթունն ալ ձախ կողմը նստեցան , իսկ արքունական օրիորդը թագաւորին դիմացը նստաւ , թագաժառանգն ալ ոտքի վրայ թագաւորին ծնկուրններուն մէջ կեցեր էր : Ըմէնքն ալ զլուխնին դէպ 'ի իրեն ծռած կեցեր էին , և ստէպ ստէպ զինքը կը գրկէին : Լ՝յո ցաւալի տեսարանը մէկ ժամ և իրեք քառորդ տեւեց , ու ամենեւին բառ մը չէր լսուեր : Լ՝յնչափ միայն կը տեսնուէր , որ թագաւորին իւրաքանչիւր խօսելուն ' իշխանուհեաց հեծկլտանքը կը սաստկանար և այնպէս քանի մը վայրկեան կը տեւէր . վերջէն թագաւորը նորէն իր խօսքը առաջ կը տանէր : Երեսն կերպէն յայտնի իմացուեցաւ որ թագաւորը ըսեր էր անոնց իր դատապարտութիւնը :

Տասը քառորդ անցած թագաւորը ոտքի վրայ ելաւ և հետզհետէ ամէնքն ալ ելան . ես դուռը բացի . թագուհին թագաւորին աջ կողմէն թեւ մտեր էր , և երկուքը մէկտեղ թագաժառանգին ձեռքէն բռնած էին . արքունական օ-

րիորդը թագաւորին ձախ կողմէն կէս մը գրկեր էր զինքը . նոյնպէս Եղիսաբեթ խաթունն ալ ձեռքը իր մեծաշուք եղբօրն ուսին վրայ դրեր էր . մէկ քանի քայլ դէպ 'ի մեծ դուռը ըրին ցաւալից հառաչանքներով : « Լ՝պահով եղիք , ըսաւ թագաւորը , որ վաղը ժամը ութին նորէն իրարու հետ կը տեսնուինք » : — « Բայց հաստատուն խօսք տուր » , ըսին իրենք : — « Լ՝յո » , կը խոստանամ » , կրկնեց թագաւորը : — « Սակայն չե՞նք կրնար արդեօք եօթին տեսնուիլ » , ըսաւ թագուհին : — « Եւ թող եօթին ըլլայ » . . . և վերջը ' Երթաք բարով ըսաւ թագաւորը , բայց այնպիսի ազգու կերպով , որ ամէնքը սկսան նորէն հեծկլտալ . արքունական օրիորդը ինքզինքը կորսնցուցած թագաւորին ոտքը ինկաւ , ես զինքը ոտքի վրայ կանգնեցի Եղիսաբեթ խաթունին հետ . թագաւորը ուզելով աս ցեւազին տեսարանը կնքել , զանոնք ամէնքն ալ գորովագուծ կերպով մը գրկեց , և կրկին անգամ Երթաք բարով ըսելով խուցը մտաւ :

Իշխանուհիները վեր իրենց խուցը գացին . ես կ'ուզէի արքունական օրիորդին թեւէն բռնած մէկտեղ երթալ , բայց հազիւ թէ սանդիսոյն երկրորդ աստիճանը ելայ , երկու պահանքներ զիմացս ելլելով արգիլեցին զիս որ չերթամ : Ինչպէս երկու դուռն ալ գոց էր , բայց որոշ կը լսուէր իրենց լալուն ու հառաչանաց ձայները : Թագաւորը գնաց պզտի աշտարակը իր խոստովանահայրը գտնալու համար , ուսկից կէս ժամ վերջը դուրս ելաւ . ես իրեն ընթրիքը տարի , քիչ կերաւ բայց ախորժակով :

Ընթրիքէն վերջը իր ներքին սենեակը քաշուեցաւ . քիչ ատենէն դուրս ելաւ անկից խոստովանահայրը և խոնդրեց պահապաններէն որ երթայ խորհրդարանի խուցը , որպէս զի պատարագ ըսելու հարկաւոր բաներն ուզէ : Պ . Ֆիրմընդ շատ աշխատեցաւ ուղած բաները ձեռք բերելու համար . և վերջապէս մարդ խրկեցին որ իր ուղածները

Վեղարաւոր կրօնաւորաց եկեղեցիէն բերեն, որն որ ժողովրդապետական եկեղեցի եղած էր : Պ. Ֆիրմընդ խորհրդարանի խցէն դառնալով պզտի աշտարակը մտաւ . թագաւորը հոն էր, և ինչուան կէս գիշերը կէս ժամ անցած մէկտեղ կեցան : Ըն ատեն զթագաւորը հանուեցուցի, և երբոր կ'ուզէի մազերը շտկել, « Լ'շխատութիւն չարժէր », ըսաւ ու անկողին մտաւ, որուն վարագոյրները քաշեցի, ան ատեն դարձաւ ըսաւ . « Վէրի, զիս հինգին արթնցընես » :

Հազիւ թէ անկողին մտաւ, մէկէն քունը տարաւ, ու ինչուան հինգ առանց արթննալով քնացաւ : Թագաւորը յորդորեւ էր զՊ. Ֆիրմընդը որ քիչ մը հանգչի . անիկայ իմ անկողնիս վրայ պառկեցաւ, և ես նոյն գիշերը աթոռի մը վրայ անցուցի թագաւորին խուցը, խնդրելով Լ'ստուծոյ որ իրեն ուժ և զօրութիւն տայ :

Սեցի որ ժամը հինգ կը զարնէր, ու ճրագ վառեցի . իմ ըրած շարժմունքէս թագաւորը արթնցաւ և վարագոյրը բանալով հարցուց ինձի թէ արդեօք հինգ կը զարնէր : « Տէր արքայ, պատասխանեցի ես իրեն, ուրիշ ժամացոյցները զարկին, բայց ճօճանակաւոր ժամացոյցը դեռ չզարկաւ », կրակը վառելով՝ իր անկողնին մօտեցայ : —

« Ը առ լաւ քնացայ, ըսաւ թագաւորը, իրաւ որ շատ կարօտութիւն ունէի, երէկու ընէ յոգնած էի . ո՛ւր է Պ. Ֆիրմընդը », — « Իմ անկողնիս վրայ պառկեցաւ », ըսի : — « Հապա դուն աս գիշեր ո՛ւր պառկեցար », հարցուց թագաւորը : — « Լ'ս աթոռիս վրայ », — « Ը առ կը ցաւիմ », — « Լ'հ, տէր արքայ, ըսի հառաչելով մը, ինչպէս կրնամ ասանկ առթի մէջ ես ինքզինքս մտածել », : Ինքը ան ատեն ձեռքս բռնելով գորովալիւր կերպով մը սխմեց :

Թագաւորին հագուելուն օգնեցի և զինքը սանտրեցի . սանտրելու միջոցս իր ժամացոյցին վրայէն կնիքը փրցուց ու իր վտաւակին զրպանին մէջ դրաւ, իսկ ժամացոյցն ալ կրակարանին վրայ

դրաւ . վերջէն մատէն մատնի մը հանելով նոյն զրպանին մէջը խոթեց . շապիկը փոխեց . առջի օրուան վտաւակը հագաւ, և վրայէն ալ առաւ վերարկուն : Վրպանէն հանեց զրապանակը, քթախոտի տուփը, քսակը և ասանկ ուրիշ մանր մոնր բաներ, և առանց ամենեւին խօսելու ամէնն ալ կրակարանին վրայ դրաւ՝ պահապաններուն դիմացը : Ըստնք ընէլէն վերջը ըսաւ որ Պ. Ֆիրմընդին ձայն տամ . ես իրեն դացի, բայց անիկայ արթնցեր էր, և թագաւորին ետեւէն ներքին խուցը գնաց :

Ըն ատեն մեծկակ դարան մը մէջտեղ բերի, և պատարագ ըսելու խորան մը ձեւացուցի . որովհետեւ գիշերուան ժամը երկուքին ատենները պատարագ ըսելու համար հարկաւոր եղած ամէն բաները բերեր էին : Բահանայական զգեստները իմ խուցս դրի, և ամէն բան պատրաստելէն վերջը իմացուցի թագաւորին . ինքը հարցուց ինձի թէ արդեօք սպասաւորութիւն կըրնամ ընել . և ես « Լ'յո, ըսի, բայց ամէն պատասխանները լաւ միտքս չեն գար », ան ատեն թագաւորը ձեռքի եղած գիրքը բանալով, պատարագի սպասաւորութեան կտորը փնտռեց ու ինձի տուաւ և ուրիշ մըն ալ իրեն պահեց : Լ'յո միջոցին քահանան սկսեր էր հագուել . ես խորանին առջև թեւաւոր աթոռ մը պատրաստեւ էի, և մէկ մեծ բարձ մըն ալ գետինը դրեր էի . բայց թագաւորը ըսաւ ինձի որ զանիկայ վերցընեմ, և ինքնիրեն իմ ներքին խուցս երթալով՝ մաղէ պզտիկ բարձ մը բերաւ, որ ուրիշ անգամ աղօթքի համար զայն կը գործածէր : Երբոր քահանան պատարագի ելաւ, պահապանները նախասենեակը քաշուեցան, և ես դռները գոցեցի . պատարագը վեցին սկսաւ, և այս ահաւոր խորհրդին ատենը խոր լուութիւն մը տիրած էր : Թագաւորը միշտ ծունկի վրայ եկած՝ խորին ջերմեռանդութեամբ մը տեսաւ պատարագը, և նոյնպէս ալ հաղորդուեցաւ . պատարագէն վերջը իր ներքին սենեակը քաշուեցաւ, և քահա-

նան ալ իմ խուցս գնաց զգեստները հանելու համար :

Ես այն ատեն թագաւորին ներքին խուցը գացի , որն որ իմ ձեռքէս բռնելով՝ ասանկ ըսաւ . “ Գլէրի , ես քու ծառայութեանդ վրայ գոհ եմ , ” — “ Ի՛հ , տէր իմ արքայ , պատասխանեցի ես իրեն ոտքը իյնալով , ո՛հ սրճափ կը փափաքէի իմ կեանքս տալով քու անողորմ զահիճներուդ սիրտը կակղացրնել , ու ազատել քու կեանքդ , որ այնչափ սիրելի է ամէն բարի գաղղիացիներու : Չեմ կարծեր , տէր իմ , որ կարենան համարձակիլ ատ մահացու հարուածը տալու քեզի , ” — “ Եւ զիս չվախցրներ , կրկնեց թագաւորը , որովհետեւ արդէն պատրաստ եմ . բայց դուն քու կենացդ զգոյշ կեցիր . պիտի խնդրեմ որ իմ որդւոյս քովն ալ դուն կենաս , և իրեն ամէն կարելի խնամք տանիս աս ահաւոր բնակարանիս մէջ : Յիշեցուր իրեն և միտքը ձգէ թէ ինչ վիշտ զգացեր եմ ես իրեն քաշած նեղութեանցը համար . գուցէ օր մը պիտի գայ որ կարենայ վարձատրել ինքը քու աս հաւատարիմ ծառայութիւններդ , ” — “ Ի՛հ , տէր իմ , ահ , թագաւոր իմ , թէ որ իմ քաշած թեթեւաշխատութիւններս ունեղութիւններս քեզի հաճոյ եղեր են նէ , միակ ազաւանքս այս է՝ որ զիս օրհնես . և յուսամ որ չես զլանար աս բանս այն յետին գաղղիացւոյն որ ինչուան ցայսօր քու հետդ մնաց , ” : Ես աս բաներն ըսելու ատեն ոտքը ինկած մէկ ձեռքը բռներ կեցեր էի . ինքը հաճեցաւ ինծի իր օրհնութիւնը տալու , վերջը զիս վերհանեց ու գրկելով ըսաւ . “ Եւ ասնակից ըրէ աս օրհնութեան զանոնք ալ , որ ինծի արդիւնաւոր եղան , և Գիւրթիին ալ իմ կողմանէս շնորհակալ եղիր , ” : Ետքը “ Գնա , ըսաւ , որպէս զի չկասկածին վրադ , ” . յետոյ նորէն զիս կանչեց , և առաւ դարանին վրայէն թուղթ մը ու տուաւ ինծի ըսելով . “ Ի՛հաւասիկ ասիկայ Բէդիոնի առ իս գրած նամակն է քու հաճար գալու ատենդ , աւտով կրնաս դարձեալ հոս մնալ , ” : Եւ

ընէն ձեռքը բռնելով պագի , և երթալու ատենս կրկին անգամ “ Երողած հետդ ըլլայ , ” ըսաւ :

Դարձեալ իմ խուցս մտայ , ուր որ Պ . Ֆիրմընդ անկողնիս դիմաց ծռնկի եկած աղօթք կ'ընէր : “ Եւսպիսի թագաւոր , ըսաւ ինծի ոտք ելլելով . ինչ աստիճանի համակամութեամբ ու աներկիւղութեամբ մեռնելու կ'երթայ : Եւքը անանկ խաղաղ ու հանգարտ էր , իբրեւ թէ իր պալատին մէջ պատարագ տեսնելու ըլլար՝ իր պալատականներէն բոլորուած , ” : — “ Եւքը , վրայ բերի ես , ինծի իր գորովալիւր հրաժարական ողջոյնը տուաւ , խոստանալով թէ իւրեղրէ ատենէն որ աշտարակին մէջ մնամ իր որդւոյն քով կենալու համար . կ'ազաւեմ , պարոն , որ իրեն միտքը ձգես աս բանս երբոր դուրս ելլայ , վասն զի ասկէ վերջը չեմ կրնար ես զինքը առանձին տեսնալ , ” : — “ Ի՛նչ հոգ մի ընէր , ” , ըսաւ Պ . Ֆիրմընդ , ու թագաւորին քով գնաց :

Եթանին ատենները թագաւորը իր ներքին սենեկէն դուրս ելաւ , և զիս ներս կանչեց . ու քովընտի քաշելով զիս՝ “ Եւ կնիքս օրդւոյս տաս , ըսաւ , իսկ աս մատնին թագուհւոյն . ըսէ իրեն որ ցաւալի է ինծի զօրդիս թողուլը . . . : Եւյիպէս աս կծիկը իրենց տաս , որ բոլոր իմ ընտանեացս մազերովը շինած է . . . : Ի՛նչ թագուհւոյն , և իմ սիրելի օրդւոյս , ու քրոջս , որ թէպէտ իրենց խոստացեր էի թէ աս առտու նորէն կը տեսնուիմ , բայց չուզեցի աս բաժանմանս յետին ցաւոյն մասնակից ընել զիրենք : Դառնէ ինծի ալ առանց իմ վերջին համըրքս տալու բաժնուիլ իրենցմէ , ” : Եւ զուրցելէն ետքը աչքերը լեցուեցան ու լացաւ . բայց վերջը նորէն առաջ տարաւ խօսքը ցաւազին ձայնով մը ու ըսաւ . “ Իմ կողմանէս տաս իրենց իմ յետին Եւքը բարովս , ” . և յետոյ իր ներքին սենեակը քաշուեցաւ :

Պահապանները մեզի մօտիկցած ըլլալով , իր ըսածները ըրէր էին , և ինծի տուած բաներն ալ տեսան , զորոնց ձեռքս բռներ էի : Եւզեցին որ իրենց

տամ, բայց մէջերնէն մէկը ըսաւ որ հիմկուհիմա քովս կենայ՝ ինչուան ժողովքը բան մը որոշէ, ինչպէս որ եղաւ ալ:

Քառորդէ մը վերջը՝ Թադաւորը դարձեալ իր ներքին սենեկէն ելաւ, և ինծի ըսաւ. « Գնա մկրատ մը ուզէ », ու նորէն ներս գնաց: Եւս պահապաններուն հետ խօսեցայ. անոնք ալ հարցուցին ինծի՝ թէ « Ի՞նչ պիտի ընէ մկրատը », եւ « Զեմ գիտեր », ըսի. ան ատեն ինծի ըսին որ երթամ իմանամ: Եւս խցին դուռը զարկի, ու Թադաւորը դիմացս ելաւ. և պահապան մը, որ ետեւէս կու գար, ըսաւ Թադաւորին. « Իմացանք որ մկրատ մը ուզեր ես. բայց խորհրդարանին հարցընելէն առաջ պէտք է որ մենք պատճառը իմանանք », իսկ Թադաւորը պատասխանեց. « Կ'ուզեմ որ Գլէրի մազս կտրէ », Ին ատեն պահապանները քաշուեցան, և իրենցմէ մէկը խորհրդարանի խուցը գնաց հարցընելու համար. հոն կէս ժամ մտածելէն ետքը որոշուեցաւ որ չտան: Պահապանը դարձաւ ու իմացուց Թադաւորին ժողովքին որոշմունքը. Թադաւորը « Սկրատին չեմ դրպչիր, ըսաւ. կը փափաքիմ որ Գլէրի մազս կտրէ, և թէ որ կ'ուզէք՝ ձեր գիմացը », Պահապանը գնաց որ նորէն հարցընէ. բայց ժողովքը նոյնպէս հրաման չտուաւ:

Եւս միջոցին ինծի իմացուցին որ հարկ էր Թադաւորին հետ մէկտեղ երթալ ինչուան գլխատման տեղը՝ զինքը հանուեցընելու համար. աս երբոր լսեցի, կարծես թէ գլխուս կայծակ մը զարկաւ, բայց ինքզինքս քաջալերելով պատրաստուեցայ աս վերջին ծառայութիւնն ալ ընելու իմ տիրոջս. վասն զի ինչ ալ քլարն է, իրեն համար աւելի հաճելի էր որ աս ծառայութիւնս դահիճ մը չընէ. սակայն նոյն ատենը ուրիշ պահապան մը եկաւ, ու ըսաւ ինծի որ աւելորդ տեղը չպատրաստուիմ, որովհետեւ նոյն բանը դահիճն ալ կըրնար ընել:

Եւրդէն առտուան ժամը հինգէն սկը

սեալ բոլոր Բարիզ քաղաքը զինուորով լեցուած էր, ու Թմբուկին ձայնը զէնք առնելու կը կանչէր զանոնք: Եւստրակին մէջը սաստիկ գոռում գոչում մը կար զէնքերու, ձիաւորներու ու Թնդանօթներ քաշելու, զորոնք միակերպ տեղէ տեղ կը փոխադրէին:

Իննին աղաղակը երթալով աւելցաւ, ու կատաղութեամբ մը դռները բացուեցան. Սանդէն եօթը ութը պահապաններով առաջ նետուեցաւ, հետը առած տասը զինեալ զօրականներ: Եւս աղաղակը լսելով Թադաւորը խցէն դուրս ելաւ, ու ըսաւ Սանդէնի. « Ի՞նչու շուշտ ինծի համար եկեր ես », Սանդէն « Եւս », պատասխանեց: — « Խնդրեմ՝ վայրկեան մըն ալ », ըսաւ Թադաւորը, ու իր ներքին խուցը քաշուեցաւ: Բիչ մը վերջը իր խոստովանահօրը հետ մէկտեղ դուրս ելաւ, ձեռքը իր կտակը բռնած, ու հոն դիմացը ելաւ Յակօբ Սուրբ պահապանը, որն որ քահանայութիւնը թողած անգգամին մէկն էր. « Կ'աղաչեմ, ըսաւ Թադաւորը, որ աս թուղթը Թադուհէոյն իմ կնոջս տաս », — « Եւս ի՞նչ պիտի ընեմ ատ թուղթը, պատասխանեց անիկայ. ես զքեզ մահուան տեղը տանելու համար եկեր եմ », Ին ատեն Թադաւորը ուրիշ պահապանի մը դարձաւ, որուն անունն էր Կոպոյ, « Խնդրեմ, ըսաւ, ասիկայ կնոջս տար, ու թէ որ կ'ուզես ալ կարգաւ, վասն զի անանկ բաներ են՝ զորոնք կ'ուզեմ որ ամէնքն ալ գիտնան »,:

Եւս Թադաւորին ետեւը կեցեր էի կրակարանին մօտ. ինքը ինծի դարձաւ, ու ես ալ իրեն ուզեցի տալ իր լայն վերարկուն. « Հարկաւոր չէ, ըսաւ, զըլ իարկս միայն բաւական է », Եւս միջոցին գլխարկը տալու ատեն պատահամբ ձեռքս իրեն ձեռքին դպաւ, զորն որ վերջին անգամ սխմեց, ու դառնալով պահապաններուն գլխաւորաց՝ ասանկ ըսաւ. « Եւ փափաքէի որ Գլէրի որդւոյս քով կենայ, որովհետեւ արդէն վարժած է իրեն ծառայելու. կը յուսամ որ Հասարակութիւնը աս չնորհչս ընէ ինծի », ետքը Սանդէնին դար-

ճառ, ու « Լըթանք », ըսաւ : Լ'սոնք եղան իր վերջին բառերն որ խցին մէջ զուրցեց : Լըբոր սանդխոյն զլուխը հառաւ, Ս'ադէյ աշտարակին պահապանին պատահեցաւ, որուն ասանկ ըսաւ . « Լըթէկ չէ առջի օր քիչ մը քեզի դէմ նեղացեր էի, բայց կ'աղաչեմ որ ներես » . Ս'ադէյ և ոչ իսկ պատասխան տուաւ, և կարծես թէ և ոչ իսկ կ'ուզէր մօտիկ ընել :

Եւ ան ատեն մինակ մնացի նոյն խուցին մէջ՝ սաստիկ ցաւոյ մէջ ընկղմած և գրեթէ ինքզինքս կորսնցուցած : Թմբուկներուն ձայնէն հասկըցայ որ թաղաւորը մահուան տեղը հասեր էր . ժամ մը վերջը թնդանօթներուն արձագանգը, կեցցէ Աշխ, կեցցէ Հասարա, հապտոմիան ձայներուն աղաղակը ի մացուց մեզի որ առաքինի ու բարեբարոյ թաղաւոր մը պակսեր էր աշխարհքէն :

ԳԼԷԻԻ

Մնացածը զայ ակնարկ :

Նարոյեռն Ա. յէրպա կղզի :

Լ'ն միջոցին որ դաշնակից զօրաց բանակները ամէն կողմէն խմբովին Վաղդիա կը մտնէին, մեծն՝ Վաբուէոն Փոն դէնըպլոյի մէջ իր վերջին տխուր ու օրտաշարժ հրաժարական ողջոյնը տալով կը բաժնուէր իր քաջամարտիկ զօրքէն, որոնք իրենց վեհազն զօրավարին չորս կողմը առած՝ այն աչքով մը կը նայէին իրեն իբրեւ թէ աս վերջի անգամն էր որ զինքը կը տեսնէին :

Վաբուէոն, 1814 տարւոյն ապրիլի 20^{ին} դէպ 'ի Ֆրէժիւս ճամբայ ելաւ, հետը առած չորսհարիւր պահապան զօրք, Տրուոյ և Պեռորան զօրավարները՝ որոնցմէ առջինը կայսեր բանակի օգնական ու մէկալը արքունի տան հաղարադետ էր, Վամպրոն զօրավարը՝ հրամանատար որսորդ զօրաց առաջին վաշտին, Սերմանուլքի սարունը՝ հրամանատար լեհացի նիզակաւորաց, Ս'ա

լէ ասպետը, Վոռնիւէլ և Սաուլ թնդանօթաձիգ զօրաց գնդապետները, Լուպեր, Լամուրէթ, Հիւրոյ և Վամպլի՝ հետեւակ զօրաց գնդապետները, և Պալինսքի ու Շուլց լեհ նիզակաւորաց գնդապետները : Ֆրէժիւսի մօտ եղած ծովածոցին մէջ, որն որ վերջը այնչափ անուանի եղաւ, երկու պատերազմական նաւ կը գտնուէր, որոնցմէ մէկը Վաղդիացւոց ու մէկալը Լ'նգղիացւոց էր : Վաբուէոն, իր արսուրանաց տեղը Լ'լպա կղզին երթալու համար, չուզեց վաղդիական նաւով մը երթալ, ու նախամեծար ընտրեց անգղիացի նաւը, ըսելով թէ « Զեմուզեր որ ըսուի բնաւ թէ վաղդիացի նաւ մը զիս յաքսորս տարեր է » :

Ս'այիսի 3^{ին}, երեկոյեան ժամը վեցին, անգղիացի պատերազմական նաւը Բորդոյ-Ֆերրայոյին նաւահանգիստը մտաւ . ասիկայ մայրաքաղաքն էր Լ'լպա կղզւոյն, զորն որ իբրեւ թաղաւորութիւն մը պարգեւեցին այն մարդուն, որ քիչ մը առաջ այնչափ ժողովրդոց գլուխ կեցած՝ բազմաթիւ ազգեր կը կառավարէր :

Լ'լպա կղզին հնուց Իլուա կը կոչուէր . և առաջ Յունաց վաղթականի մը ձեռքն էր, բայց վերջը Վաթուրիոյ հետ մէկտեղ Հռովմայեցւոց իշխանութեանը ձեռքն անցաւ : Լ'ն ժամանակներէն 'ի վեր խիստ նշանաւոր էին իր երկաթահանքերը, զոր նաեւ Ս'իրգիլիոս Ենէականին ժ. գրքին մէջ (տող 275—276) կը յիշատակէ ըսելով .

Եւ հարիւրեակս երիս Իլուա ետ կըղզի,
ի քալիբեան բովս անըսպառն բերրի :

Մետասաներորդ դարուն Բիզայի մեծագոր հասարակապետութիւնը այս կղզւոյն տիրեց . բայց ատեն անցնելով՝ Ղենովացիք Բիզացւոց ձեռքէն առին զայն, և Լուգացւոց տուին՝ այսու պայմանաւ որ տարուէ տարի տուրք մը տան : Բիչ ատենէն Բիզացիք նորէն առին, և բնակչաց ալ խել մը արտօնութիւններ շնորհեցին, որպէս զի իրենց հաւատարիմ մնան : Յետոյ Բիչ